Սրաշեն

Բնակչություն՝ 100

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1025 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո (1828թ.), Սրաշենում բնակություն են հաստատել Պարսկաստանից ներգաղթած մի խուբ հայ ընտանիքներ: Սրաշենից մոտ 2կմ արևմուտք պահպանվել են՝ եկեղեցի (Սբ.Հռիփսիմե, 17-րդ դար), գյուղատեղիներ, գերեզմանոցներ (17-18դդ.): Սրաշենում 1930-ականներին կազմավորվում է կոլտնտեսությունը, որը 1960թ. միավորվում է Շիկահողի խորհտնտեսությանը՝ 1991թ., տարանջատվելով Շիկահողի գյուղխորհրդից ձևավորվում է Սրաշենի գյուղական խորհուրդը:
Սրաշենը, որպես սահմանամերձ գյուղ, զգալի տուժել է 1990-93թթ. պատերազմական գործողությունների ընթացքում: Սրաշենցիները, կազմավորելով ինքնապաշտպանական ջոկատ, ակտիվ մասնակցություն են ունեցել հայրենի սահմանների պաշտպանության գործում:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 2122 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 408 հա, որից՝
- վարելահող՝ 172 հա, խոտհարք՝ 16 հա, արոտ՝ 187 հա, այլ հողատեսք՝33 հա
- բնակավայրերի հողեր՝ 28 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝4 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1203 հա,
- անտառային հողեր՝ 478 հա, որից անտառածածկ՝ 154 հա
- ջրային հողեր՝ 1 հա